

Վերոնիկա Թորոսյան
Խ.Արուսյանի անվան ՀՊՄՀ
Հայաստան

Անոտացիա: Ներկա բարդ աշխարհաքաղաքական պայմաններում և Հայաստանի Հանրապետության ունեցած լուրջ քաղաքական հակամարտությունների համատեքստում շատ կարևոր է ուսումնասիրել նրա հաստատած հարաբերություններն անմիջական հարևանների հետ: Վերոնշյալն ապացուցելու է գալիս 2016թ. քառօրյա հայ-ադրբեջանական պատերազմը: Երկու կողմից շրջափակված լինելով հակամարտող պետություններով, պատերազմական գործողությունների վերսկսման վտանգի տակ, Հայաստանի Հանրապետության համար շատ կարևոր է Հարավային Կովկասում ամուր դիրքեր գրավելը, ինչը հնարավոր կլինի, առաջին հերթին, հարևան պետությունների հետ խաղաղ հարաբերություններ հաստատելու միջոցով: Ուստի կարևոր է ուսումնասիրել հայ-ադրբեջանական հակամարտությունն ու դրա զարգացման դինամիկան:

Բանալի բառեր: Հայ-ադրբեջանական պատերազմ, քարոզչական պատերազմ, Արցախյան հակամարտություն, Խոջալուի «ցեղասպանություն», փախստականների խնդիր:

Արցախյան հիմնախնդիրը ԽՍՀՄ փլուզումից հետո վերաճեց հայ-ադրբեջանական պատերազմի, որի արդյունքում զոհվեց շուրջ 20-25.000 մարդ, երկու երկրներից եղան մոտ 1 մլն փախստականներ [1, էջ 122-123]: Դիվանագիտական բանակցությունների ընթացքում ադրբեջանական կողմը մշտապես հայտարարում է, որ Արցախը Ադրբեջանի մի մասն է կազմում, իսկ հայկական կողմը մատնացույց է անում Արցախի բնակչության ինքնորոշման և անկախության իրավունքը [2]:

Շուրջ քառօրյ դար ընթացող քարոզչական պատերազմի ընթացքում հակամարտող կողմերը առաջ են քաշել մի շարք տեսակետներ՝ խնդրո առարկա տարածքի՝ իրենց պատկանելու իրավունքը ապացուցելու համար: Ստորև ներկայացնում ենք այդ քարոզչական պատերազմում ադրբեջանական կողմի կիրառած ռազմավարության մի քանի դրույթներ:

Ադրբեջանի հիմնական ռազմավարությունը Արցախյան հիմնախնդրում բռնաճնշման գործադրումն է: Նման քաղաքականության իմաստը կայանում է ռազմա-քաղաքական մշտապես հնչող սպառնալիքների մեջ, որն ուղեկցվում է սպառազինությունների չդադարող մրցավազքով, կապի և տրանսպորտային միջոցների արգելափակմամբ, տնտեսական և դիվանագիտական ճնշմամբ [3, էջ 197]: Սա բազմիցս պաշտոնական ու ոչ պաշտոնական հայտարարություններում շեշտվել է Ադրբեջանի կողմից:

Վերոնշյալի ապացույց կարող է հանդիսանալ Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի «Ճանապարհի դեպի խաղաղություն Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի մարզում. Վերահսկողության և համագործակցության միջոցով» հոդվածը: Հեղինակը խոսում է զուսպ և չափավոր քաղաքականություն վարելու մասին՝ հակամարտության լուծման ճանապարհին: Չնայած դրան, նա միաժամանակ դիմում է սպառնալիքների, նշելով, որ Ադրբեջանը չի պատրաստվում ոչ մի սանտիմետր զիջել «իր հողերից» [4, էջ 19]:

Փախստականների և տեղահանված անձանց նախկին բնակության վայրերը վերադառնալու խնդիրը նույնպես Ադրբեջանի որդեգրած ռազմավարության կարևոր բաղկացուցիչներից է: Այն մինչ օրս բազմաթիվ տարաձայնությունների տեղիք տվող հիմնահարցերից է:

Այս հիմնահարցի լուծման դժվարությունը նախ և առաջ կախված է նրանից, թե ինչ են հասկանում կողմերը «փախստական» կամ «տեղահանված անձ» ասելով և ովքեր են հանդես գալիս այդ կարգավիճակներում: Ըստ ադրբեջանական տեսակետի՝ «փախստականներ» են համարվում Հայկական ԽՍՀ-ից 1989-1990թթ. Տեղահանված ադրբեջանցիները (մոտ 160.000 մարդ), իսկ «ներքին տեղահանված անձանց» կարգավիճակին համապատասխանում են Լեռնային Ղարաբաղից (շուրջ 35.000 մարդ) և հարակից շրջաններից (մոտ 300.000) տեղահանված ադրբեջանցիները: Ադրբեջանական արտաքին քարոզչության առանցքային դրույթներից մեկն է փախստականների և

տեղահանվածների 1 միլիոնանոց թվաքանակի ներկայացումը՝ որպես ավելի պատկառազորու և հրատապ լուծում պահանջող հարց: Իրականում, և Հայաստանից, և Լեռնային Ղարաբաղից, և ԼՂ հարակից շրջաններից գնացած աղբբեջանցիների թվաքանակը, միասին վերցրած, չի անցնում հինգ հարյուր հազարը [5, էջ 69-70]:

Իրոք՝ Ադրբեջանի ղեկավարությունն արտագաղթողների թիվն այսպես կրճատելու համար ունի իր նեղ շահերը, և հենց դա էլ հասարակական դժգոհության առիթ է տալիս: 1989թ. ԽՍՀՄ մարդահամարի տվյալներով Ադրբեջանում բնակվում էր մոտ 7 միլիոն մարդ: 1988-1994թթ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության ժամանակ Ադրբեջանի մոտ կես միլիոնանոց հայ բնակչությունը երկրից քշվեց: 1990-ական թթ. կեսերին մոտավորապես նույնքան էլ ռուսներ, հրեաներ և այլ ազգերի ներկայացուցիչներ հեռացան երկրից: Դոկտոր Ա.Արսենևի հաշվարկների համաձայն, այլազգի բնակչության արտագաղթի հետևանքով Ադրբեջանը կորցրել է ոչ պակաս, քան 1.2 միլիոն մարդ: Ի հավելումն դրա, հետևելով 1994թ. ստորագրված «Դարի պայմանագրին», որը խոստանում էր միլիոնավոր դաշարների արտասահմանյան ներդրումներ, միլիոնավոր աղբբեջանցիներ հեռացան երկրից և բնակչություն հաստատեցին հիմնականում Ռուսաստանում և Թուրքիայում: Ռուսաստանյան վիճակագրության համաձայն, աղբբեջանցիների թիվն այնտեղ հասել է 2.5 միլիոնի: Ռուս գիտնականի գնահատմամբ վերջին մի քանի տարիներին Ադրբեջանից արտագաղթողների ընդհանուր թիվը 3 միլիոնից պակաս չի եղել [6, էջ 52]:

Այսպիսով, նա հանգում է այն հետևությանը, որ հաշվի առնելով աննշան բնական աճը՝ անկախության տասնամյակի ընթացքում Ադրբեջանը մոտ կիսով չափ դատարկվել է:

Հարկ է նշել նաև մեկ այլ կարևոր հանգամանք. բանակցային պրոցեսի ընթացքում աղբբեջանական կողմը համառորեն փորձել է Հայաստանին որպես վտանգավոր ագրեսոր ներկայացնել: Չնայած նման ռազմավարության կիրառմանը առկա են հակառակն ապացուցող ցայտուն օրինակներ:

Ադրբեջանի ռազմական հետախուզության նախկին աշխատակից Ալեքսեյ Զեյդարովը Իսմայիլովը, իր իսկ խոստովանությամբ, 1991-1995 թթ. անձամբ կազմակերպել և իրականացրել է մի շարք ահաբեկչական գործողություններ ինչպես Հայաստանի տարածքում, այնպես էլ Վրաստանում և ՌԴ Ստավրոպոլի ու Կրասնոդարի երկրամասերում: Մասնավորապես նա մշակել և իրագործել է Վրաստանից Հայաստան մուտք գործող գազամուղի պարբերական պայթեցումները (ընդհանուր թվով՝ 13), 1993 թ. կազմակերպել է 30 կգ տրոտիլ տեսակի պայթուցիկ նյութ Երևան տեղափոխելու և այն «Էրեբունի» հյուրանոցում տեղադրելու գործողությունը, 1992 թ. ՌԴ Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերում հակահայկական սադրիչ բնույթի թռուցիկների օգտագործմամբ ձեռնարկել է «դիվերսիոն հատուկ միջոցառումներ»՝ ՌԴ հարավային այդ շրջաններում բնակվող հայերի ու կազակների միջև ազգամիջյան թշնամանք սերմանելու, այդ հողի վրա բախումներ հրահրելու նպատակով: Կուբանում և Ստավրոպոլի երկրամասում Իսմայիլովը կազակների անունից կազմակերպել է հայկական երկու գրասենյակների, իսկ հետագայում՝ հակահայկական դիրքորոշում ունեցող «Կուբանսկիե կուրիեր» թերթի խմբագրության պայթեցման գործողությունները ԱՍԱԼԱ-ի անունից: Նրա խոստովանությամբ՝ 1994 թ. Ադրբեջանի հատուկ ծառայությունները ծրագրել էին պայթեցնել նաև Երևանի կառավարական շենքերի համալիրը և մտադրություն են ունեցել օգտագործել հատուկ այդ նպատակի համար պատրաստված երկտակ հատակ ունեցող բենզատար, որում տեղադրվել է 3 տոննա տրոտիլ [7, էջ 8]:

Ադրբեջանական պատմական հիշողության մեջ ներարկվում է նաև «կորսված տարածքների» գաղափարը: Հայաստանը որակվում է իբրև «պատմական աղբբեջանական տարածքների վրա արհեստականորեն ստեղծված միավոր»: Բաքվի այն հոխորտանքին, թե իբր Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական Հանրապետության անկապտելի մաս են, հայկական կողմը կարող է պատասխանել, որ այդ տարածքների կարգավիճակը որոշված է միջազգային բազմակողմ պայմանագրերով, որոնք բացառում են այդ տարածքների հետ կապված հարցերը դիտել որպես Ադրբեջանական Հանրապետության ներքին գործ: Իրոք՝ ԱդրԽՍՀ-ն միակն է եղել նախկին խորհրդային հանրապետությունների շարքում, որ լիիրավ ինքնիշխանություն չի ունեցել իր սահմանները մտցրած տարածքներում, միակը, որի ինքնիշխանությունը սահմանափակված է եղել միջազգայնորեն ճանաչված պայմանագրերով ու որոշումներով: Թե՛ Նախիջևանը, թե՛ Լեռնային Ղարաբաղը 1921 թվականից ունեցել են միջազգայնորեն ճանաչված կարգավիճակներ: Առաջինի համար սահմանված է եղել խնամակալության տակ գտնվող ինքնավար տարածքի, երկրորդի

համար՝ ԱդրԽՄՀ-ի սահմաններում ազգային պետական կազմավորման (լայն իրավունքներով մարզային ինքնավարության) կարգավիճակ [8, էջ 19]: Այնուամենայնիվ, Ադրբեջանի առաջատար քաղաքական քարոզիչներից մեկը՝ Սաբիր Մասդովը «Արևմտյան Ադրբեջանի պատմական աշխարհագրություն» խորագրով մի սովոր հատոր է հրատարակել, որտեղ «Արևմտյան Ադրբեջան» ասելով ի նկատի ունի ժամանակակից Հայաստանի Հանրապետության տարածքը: Խոսում է այն փաստը, որ այս գիրքը հրատարակվել է Հ. Ալիևի «Ադրբեջանցիների ցեղասպանության մասին» հրամանագրի համաձայն [9, էջ 2]: Մա Հայաստանին որպես ագրեսոր ներկայացնելու մեկ այլ ձախողված փորձի օրինակ է:

Իբրև հայերի կողմից ադրբեջանցիների ցեղասպանության դրվագ են որակվում Խոջալուի 1992 թ. իրադարձությունները, որոնց վերաբերյալ Ադրբեջանում և նրանից դուրս արտահայտվել են ամենահակասական կարծիքներ: Ճշգրիտ հայտնի է միայն, որ Խոջալուի գրավման և դրան հետևած մարտերի ժամանակ զոհվել են խաղաղ բնակիչներ: Դեպքերի հանգամանքները մինչ այժմ մնում են հակասական՝ ինչու են եղել քաղաքացիական զոհեր, զոհերի քանակը և անգամ էթնիկ պատկանելությունը (ադրբեջանցիներ, քրդեր, թե՛ թուրք-մեխլեթցիներ): Ադրբեջանական կողմը պնդում է, որ հայ զինվորները գիտակցաբար կրակել են գյուղից հեռացող բնակիչների վրա, իսկ հայկական կողմը դա ժխտում է: Կա վարկած, որ գիշերային ժամերին Խոջալուից հեռացող փախստականներն ընկել են ադրբեջանցի զինվորների կրակի տակ: Բազմիցս կարծիք է հայտնվել, այդ թվում՝ ադրբեջանական հեղինակների կողմից, որ Խոջալուի բնակիչները զոհ են դարձել սադրանքի՝ կազմակերպված ադրբեջանական հրամանատարների կողմից: Ցանկացած դեպքում ակնհայտ է, որ Խոջալուի բնակիչները դարձել են Ադրբեջանում տեղի ունեցող քաղաքական խաղերի՝ Ա. Մութալիբովի և Ժողովրդական ճակատի միջև իշխանության համար պայքարի զոհերը:

Խոջալուում տեղի ունեցած դեպքերին ադրբեջանական կողմի տված որակման գլխավոր հակափաստարկը թերևս Ա. Մութալիբովի տված հարցազրույցն է:

1992թ. ապրիլին «Նեզավիսիմայա գազետա» թերթում Այազ Մութալիբովը հարցազրույց տվեց չեխ լրագրող Դանա Մազալովային: Հարցազրույցի ժամանակ պարզ դարձավ, որ Խոջալուի դեպքերը հենց ադրբեջանցիների կողմից լավ կազմակերպված սադրանք էր: Նախկին նախագահը նշում է հետևյալը. «Ինչպես նշում են Խոջալուի փրկված բնակիչները, ամեն ինչ կազմակերպված է եղել իմ հրաժարականի առիթ ստեղծելու համար: Ինչ-որ ուժ գործում էր նախագահին հատուկ վարկաբեկելու ուղղությամբ: Ես չեմ կարծում, որ այսպիսի իրադրությունների ժամանակ շատ խելացի և հստակ կողմնորոշվող հայերը թույլ կտային, որպեսզի իրենց ֆաշիստական գործողությունները մերկացնող փաստաթղթերը հայտնվեին ադրբեջանցիների ձեռքերում: Կարելի է ենթադրել, որ ինչ-որ մեկին ձեռնտու էր հետագայում ցույց տալ այս կողմերը զինված ուժերի նիստի ժամանակ և կենտրոնացնել ամեն ինչ իմ անձի շուրջ: Եթե ես ասեմ, որ ամեն ինչում մեղավոր էր ընդդիմությունը, կասեն, որ ես բանբասում եմ: Սակայն հստակ կարելի է ասել, որ միջանցքը, որով մարդիկ կարող էին հեռանալ, հայերի կողմից բացվել էր: Այդ դեպքում ինչու պետք է նրանք կրակեին: Առավել ևս Ադդամի մոտակայքում բավականաչափ ուժեր էին տեղակայված, որոնք կարող էին դուրս գալ և օգնել մարդկանց: ...Այդ ժամանակահատվածում ես մի քանի անգամ խոսել եմ ԼՂՀ զինված ուժերի ղեկավար Մկրտչյանի հետ: Ես ասում էի. «Դուք հազարավոր մարդկանց եք սպանել: Հնարավորություն տվեք մեզ վերցնել նրանց դիակները»: Սակայն նա պատասխանում էր, որ նրանց մոտ ոչ մի դիակ չկա, այլ կան մեր մարդիկ, որոնց նրանք կերակրում են, չնայած սննդամթերքի սղությանը, և պատրաստ են փոխանակել նրանց իրենց գերիների հետ» [10]:

Չոհերի քանակն ադրբեջանական հրապարակումներում տարեցտարի աճում է: Դեպքերից հետո առաջին օրերին խոսվում էր հարյուր սպանվածների մասին: Հետագայում ամերիկյան թղթակից Թոմաս Գոլցը հաղորդել է 678 զոհերի մասին: Մի քանի ամիս անց հրապարակված փաստաթղթերում զոհերի թիվն անցնում է հազարից, իսկ Հ. Ալիևը խոսում էր Խոջալուի «հազարավոր զոհերի» մասին: «Ադրբեջանցիների ցեղասպանությունը» դառնում է Ադրբեջանի իշխանությունների քաղաքականության առանցքը: Այն հասարակությանը պարտադրվում է ոչ միայն քարոզչության, այլև նախագահական հրամանագրերի և օրենսդրական ակտերի միջոցով: Այս առումով առավել խոսում է Հ. Ալիևի «Ադրբեջանցիների ցեղասպանության մասին» հրամանագիրը: Այստեղ Խոջալուի դեպքերը ոչ միայն հայտարարվում են որպես ցեղասպանության ակտ, այլև «ցեղասպանություն» հասկացությունը տարածվում է ամբողջ հայ-ադրբեջանական պատերազմի վրա:

Ռազմական գործողությունների շրջանը թողած փախստականները ներկայացվում են ոչ այլ կերպ, քան հայերի կազմակերպած «ցեղասպանության զոհեր»: Ավելին, հայ-ադրբեջանական հարաբերությունների ողջ պատմությունը ներկայացվում է իբրև «ցեղասպանություն»: Որպես այդ ցեղասպանության փուլեր ներկայացվում են հետևյալ իրադարձությունները՝ հորինված «հայերի ներգաղթը» Լեռնային Ղարաբաղ XIX դարում, 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումները, 1918-ին Բաքվի կոմունայի կողմից մուսավաթական ապստամբության ճնշումը, 1945 թ. Հայաստանից ադրբեջանցիների որոշ մասի տեղափոխումը և, վերջապես, 1988 թ. սկսված դեպքերը: Փաստորեն, առաջ է քաշվում այն դրույթը, որ հայերը, Ռուսաստանի աջակցությամբ, սկսած XIX դարից, պլանավորել և իրականացրել են ադրբեջանցիների «ցեղասպանություն», որի կիզակետը դարձավ Ղարաբաղյան հակամարտությունը [11, էջ 34]:

Այսպիսով, Ղարաբաղյան հակամարտությունը ադրբեջանական ազգայնական վերնախավին հնարավորություն տվեց ադրբեջանցիներին համախմբելու ազգային խնդիրների շուրջ: Օգտագործելով Ղարաբաղյան հակամարտությունը՝ ադրբեջանական վերնախավը ձգտում է ադրբեջանական հասարակության մեջ ձևավորել պատմական հիշողության որոշակի մոդել, որը հիմնվում է հակահայկականության վրա և ադրբեջանական պատմությունը պատկերում է իբրև հայերի կողմից դավադրությունների ու ագրեսիվ գործողությունների մի շարան: Այս մոդելը կարելի է ի մի բերել «Ադրբեջանցիների ցեղասպանության մասին» հրամանագրից մի քաղվածքով. «19-20 դարերում տեղի ունեցած Ադրբեջանի բոլոր ողբերգությունները, որոնք ուղեկցվում էին հողերի գրավումով, հայերի կողմից ադրբեջանցիների հանդեպ իրականացվող ցեղասպանության քաղաքականության տարբեր փուլերն են»: Այս ճանապարհով ադրբեջանական վերնախավը ձգտում է նպաստել ադրբեջանցիների իբրև ազգի ձևավորմանը և ադրբեջանական ինքնագիտակցության ուժեղացմանը՝ թե՛ Ադրբեջանի էթնիկ մեծամասնության և թե՛ փոքրամասնությունների շրջանում:

Հետևելով վերջին տասնամյակի գործընթացներին՝ չի կարելի չնկատել, որ Հարավային Կովկասը խոցելի և դյուրագգաց տարածաշրջան է, որը տեղի խնդիրները սեփական ուղիով լուծելուն ուղղված մեծ տերությունների հատուկ հոգածության կարիքն ունի: Ինչպես Կովկասի պատմական փորձն ապացուցեց, դիվանագիտական ավանդական միջոցները, ինչպիսիք են «Հող՝ խաղաղության դիմաց» բանաձևը կամ միջազգային խաղաղապահ ուժերը, այստեղ չեն գործում: Ուստի հակամարտող կողմերին հարկավոր է մշակել սեփական ուրույն բանաձև՝ զինված պատերազմից ոչ պակաս կարևոր՝ քարոզչական հաջողված պատերազմ վարելու համար: Բնականաբար, այն պետք է դրված լինի իրական կայուն հիմքերի վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. De Waal T., The Caucasus, Oxford, 2010.
2. Кавказский узел, Нагорный Карабах: рискуя войной, 23 июля, 2008.
3. Минасян С., Сдерживание в Карабахском конфликте, Ер., 2016.
4. Путь к миру в Нагорно-Карабахском регионе Азербайджанской Республики: через реинтеграцию и сотрудничество, Accord 17.
5. Գալստյան Խ., Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները, «21-րդ ԴԱԸ», թիվ 4 (10), 2005:
6. Ռասիզմդե Ա., Տասնամյա անկախությունից հետո Ադրբեջանի մուտքը երրորդ աշխարհ, «Նորավանք», 2004:
7. Դավիթյան Տ., Ադրբեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը 1988-1994թթ., Եր., 2015:
8. Մանասյան Ա., Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Եր., 2003:
9. Асадов С., Историческая география Западного Азербайджана, Баку, 1998.
10. Независимая газета, Я гуманист в душе-А. Муталлибова, N64(235), 2/04/1992.
11. Демоян Г., Мелик-Шахназарян Л., Ходжалинское дело. Особая папка, Ер., 2002.

РЕЗЮМЕ
Пропагандистская война Азербайджана в арцахском вопросе
Вероника Торосян

Ключевые слова: Армяно-азербайджанская война, пропагандистская война, Арцахский конфликт, “геноцид” Ходжали, проблема беженцев.

В нынешних сложных геополитических условиях и в контексте серьезных политических конфликтов Армении очень важно изучить отношения Армении с соседями. Как доказательство выше упомянутому, можно отметить армяно-азербайджанскую четырехдневную войну в апреле 2016г. С двух сторон окруженной антагонистическими государствами и находящейся под угрозой новых военных действий Армении очень важно занять твердую позицию на Южном Кавказе. Этому способствуют, в первую очередь, мирные отношения с соседними государствами. Следовательно, важно изучить конфликт между Арменией и Азербайджаном и динамику их развития.

SUMMARY
Azerbaijan’s Propaganda War in the Artsakh Issue
Veronika Torosyan

Keywords: the Artsakh Issue, Armenia-Azerbaijani War, Propaganda War, Karabakh conflict, “genocide” of Khojali, Refugee problem.

It is very important to analyze Armenia’s relations with its neighbors considering current difficult geopolitical conditions and Armenia's political conflicts. As a proof for aforementioned statement let’s consider Armenia-Azerbaijan four-day war on April, 2016. It is important for Armenia to take confident position in the South Caucasus because the country is surrounded with antagonistic countries from two sides. First of all, this can be possible through peaceful relations with neighbor states. So its important to consider the conflict between Armenia and Azerbaijan and its dynamics.